# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՄԵԼԹ ՄԵԹԱԼ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/143 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | |
|---|---|---|
| | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | ՄԵԼԹ ՄԵԹԱԼ ՍՊԸ | Աղբամաններ ձուլվածքով, դույլով: Պատրաստված է երեք երկաթյա անկյունակով 35մմx35մմ Φ500 (ներսի տրամագիծը) հավաքված երկաթյա հարթ ձողով 40 մմ x 3 մմ, զոդված: Հարթ ձողերի ներքևի մասը 90մմ՝ ծռված և Φ7 անցքով գետնին ամրացնելու հնարավորությամբ: Վերևի մասում ամբողջ շրջանակով տեղադրված թուջե ձուլվածք Φ100մմ 12 հատ պատկերված Հայկական զարդանախշով: Զարդանախշերից ներքև ամբողջ շրջանակով ամրացված փայտե ձողեր 23 հատ:Ոտքի բարձրությունը 5սմ: Երկաթյա կառուցվածքը պատված նախաներկով և ներկված են սև գույնի: Փայտյա ձողերի չափերը 500 մմ x 60 մմ x 25մմ: Փայտը հաճարե, չոր: Գույնը դեղին–ծիրանագույն և/կամ շագանակագույն /համաձայնեցնել պատվիրատուի հետ/, լաքապատված տախտակամածային լաքով: Աղբամանի բարձրությունը 670 մմ: Արտադրողը պարտավոր է կատարել սպասարկում 1 տարի ժամանակով (գարնանը, ամռանը, աշնանը՝ 3 անգամ): Թարմացնել գույները, անհրաժեշտության դեպքում ամբողջությամբ ներկել: Փայտյա մասերը բնակլիմայական պայմանների ազդեցությունից առաջացած թերությունների դեպքում վերականգնել լաքապատված մակերեսը: Տեղափոխումն և տեղադրումը կատարվում է մատակարարի միջոցների հաշվին: Ըստ պատվիրատուի ներկայացրած հասցեների (Երևան քաղաքի տարածքում): Պատվիրատուի պահանջով (քաղաքային միջոցառումների, համերգների |

| | | |
|---|---|---|
| | | ժամանակ) կատարողը պարտավոր է իր միջոցների հաշվին ժամանակավորապես ապամոնտաժել տվյալ տարածքի աղբամանները, տեղափոխել իր մոտ և ավարտից հետո նորից տեղադրել նույն տեղում: Տեղադրումն իրականացնել վարչական շրջանի համապատասխան ստորաբաժանման որևէ աշխատակցի ներկայությամբ, տեղադրումն իրականացնելուց հետո պատվիրատուին ներկայացնել տեղադրված գույքի լուսանկարը` թղթային կամ էլեկտրոնային տարբերակով (պայմանագիրը կնքելուց հետո վարչական շրջանի համապատասխան ստորաբաժանումը մատակարարին կտրամադրի Էլեկտրոնային հասցե): Աղբամանի որևէ անտեսանելի մասում պետք է լինի դաճված “Կենտրոն 2024” բառերը: Աղբամանների տեղադրման հնարավոր հասցեներն են` Բաղրամյան,Մաշտոցի,Տիգրան Մեծի, Միասնիկյան,Արշակունյաց, Իսակովի,Սայաթ-Նովա պողոտա,Կորյուն,Սարյան,Ամիրյան, ԽանջյանԱբովյան,Նալբանդյան,Մոսկովյան,Հերացու,Խորենացու,Պռոշյան,Ագաթանգեղոս,Չարենց,Նալբանդյան,Պարոնյան,Աթենք,Գրիգոր Լուսավորիչ,Վարդանանց,Իսրաեյան,Զորափի,Արամի,Բուզանդի,Պուշկինի,Կողբացու,Քաջազնունու,Տերյան,Մկրտչյան,Խորենացու,Հանրապետության,Մելիք Ադամյան,Չաքյան,Լեո,Բեյրութի,Իտալիայի,Քոչարի,Դեմիրճյան,Արգիշտի,Սարգսյան,Հանրապետության Հրապարակ փողոցներ,Միսակ Մանուշյանի անվան պուրակ, Ազատության հրապարակ: Յուրաքանչյուր հասցեում տեղադրվող քանակը ճշտել պատվիրատուի հետ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

МЕЛТ МЕТАЛ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/143 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | |
|---|---|---|
| | наименование производителя | технические характеристики |
| 1 | | |